ՍԻՄՎՈԼԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԱՆՏԻԿ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Սիմվոլը բազմիմաստ և տարողունակ հասկացություն է: Փիլիսոփաների և մշակութաբանների շրջանում այս հասկացության միասնական սահմանման բացակայությունը պայմանավորված է դրա բովանդակության մեկնաբանությունների բազմազանությամբ:

Այսպես, Ա. Ֆ. Լոսևը, դիտարկելով սիմվոլի ավելի քան 60 սահմանում, ընդգծում է, որ «սիմվոլ հասկացությունը և՛ գրականության մեջ, և՛ արվեստում կիրառվող ամենախորհրդավոր ու հակասական հասկացություններից մեկն է, սակայն, չնայած դրան, այն շարունակում է մնալ փիլիսոփայության, սոցիոլոգիայի, գեղագիտության, մշակութաբանության, գրականագիտության և այլ գիտությունների կարևոր հասկացությունը»[1]: Նույն հեղինակը հասկացությունը սահմանում է հետևյալ կերպ. «Սիմվոլը դիալեկտիկական ամբողջություն է, երևույթի իմաստը, ընդհանրացումը, գաղափարական-կերպարային ձևակերպումը, ներքին-արտաքին արտահայտվածությունը, առարկայի և գաղափարի, էության և երևույթի միաձուլվածությունը: Դրա արտաքին ձևն ինքնուրույն արժեք ունի, իսկ բովանդակությունը դրսևորվում է համադրականության և ամբողջականության մեջ: Այն ոչ միայն ձևի, իմաստի և գաղափարի վերաներկայացում է, այլև լրացումը և ամբողջականացումն այդ ամենի»[2]: Հ. Գադամերի կարծիքով՝ «Սիմվոլը նշանակում է մի բան, որի իմաստը ոչ թե դրսևորման պարզության, տեսքի, բառային ձևակերպման մեջ է, այլ այն նշանակության, որը տարածվում է դրա սահմաններից դուրս»[3]: Պ. Ռիկերտը սիմվոլը սահմանում է այսպես. «Ես սիմվոլ եմ անվանում իմաստային ցանկացած կառույց, որտեղ ուղիղ, առաջնային, տառացի իմաստը միաժամանակ նշանակում է վերացական՝ երկրորդային, այլ բան ասող իմաստ, որը, սակայն, կարող է հասկանալի լինել միայն առաջինի միջոցով»[4]: Իսկ Մ. Եվզլինի կարծիքով՝ «Սիմվոլը արխետիպ-

---

[1] **Лосев А. Ф.** Проблема символа и реалистическое искусство. (2-е изд., испр), М., 1995, с. 5. Էլ. ռեսուրս՝ www.gumer.info/bibliotek_Buks/Culture/Los_PrSimv/index.php, (վերջին դիտում՝ 16.10.2016 թ., 15:50):

[2] **Лосев А.** Знак. Символ. Миф. М., 1982, с. 322.

[3] **Гадамер Г.** Истина и метод: Основы филос. герменевтики. Пер. с нем., (Общ. ред. и вступ. ст. Б. Н. Бессонова), М., 1988, с. 117. Էլ. ռեսուրս՝ yanko.lib.ru/books/philosoph/ gadamer-istina_i_metod.pdf, (վերջին դիտում՝ 16.10.2016 թ. 16:00):

[4] Մեջբերումն ըստ՝ **Розин В. М.** Культурология. (Учебник для вузов, 2-е изд. перераб. и доп.), М., 2003, էջ 112:

ծրագիր է, որը պատմական բեկումնային իրադարձությունների ժամանակ ազատում է մարդկանց «ճնշվածությունից», չի ենթարկվում «ռացիոնալ լուծման», տարածություն է ազատում ստեղծագործելու համար՝ դրանով իսկ թույլ տալով վերադառնալ առաջնահիմքերին»[5]: Կ. Յունգը սիմվոլը սահմանում է որպես կոլեկտիվ անգիտակցականի դրսևորում, որը մարդկային մշակույթի հիմքն է[6]:

Սիմվոլի բնույթը պարզորոշող տեսակետները, այսպիսով, բազմազան են: Սակայն կա ձևավորված մի մոտեցում, որի համատեքստում քիչ թե շատ միավորվում է սիմվոլի մեկնաբանությունների մեծ մասը: Դա սիմվոլը մշակույթի կարևորագույն բաղադրատարր, դրա կենտրոնական հասկացություն դիտելն է: Այս գաղափարը իրենց աշխատանքներում ուղղակի կամ անուղղակի հիմնավորում են Հ. Գադամերը, Օ. Շպենգլերը, Էռ. Կասիրերը, Կ. Գ. Յունգը, Վ. Դիլթայը, Ֆ. Նիցշեն, Ս. Լանգերը և այլք:

Այսպես, Էռ. Կասիրերի (նեոկանտականության ուղղության ներկայացուցիչ) համակարգում սիմվոլը մշակույթը ճանաչելու և ստեղծագործելու ձև է, մշակույթի միջոցով իրականությունը յուրացնելու գործիք, որտեղ դրսևորվում է ոգին: Այն տրամաբանական ապրիորի կառուցվածք է, որին հետագայում հավելվում է զգայական փորձը: Նա առանձնացնում է հետևյալ սիմվոլային ձևերը՝ լեզու, միֆ, կրոն, արվեստ և գիտություն: Այս ձևերում է դրսևորվում և վերարտադրվում մշակույթը, վերաձևակերպվում աշխարհը: Նա մարդուն համարում է հոմոսիմվոլիկուս՝ սիմվոլային մարդ, որն ապրում է ոչ միայն ֆիզիկական, այլև սիմվոլային տարածության մեջ: Իսկ Օ. Շպենգլերը առաջ է քաշում «նախասիմվոլի» գաղափարը՝ համարելով, որ նախասիմվոլը մշակույթի առաջացման և դրա կառուցվածքը հասկանալու բանալին է: Կ. Յունգի կարծիքով՝ սիմվոլները արխետիպային պատկերներ են, որոնք ցեղատեսակների՝ անցյալից եկող խորը իմպերատիվներ են՝ միջնորդավորված մարդկային գիտակցությամբ: «Որպես կոլեկտիվ անգիտակցականի դրսևորում՝ սիմվոլը մարդկային մշակույթի հիմքն է»[7], գրում է նա: Իսկ Վ. Դիլթայը և Ֆ. Նիցշեն սիմվոլը, մշակույթի կարևոր միջոց համարելուց բացի, քննադատում են «սահմանափակող» բնույթը, ինչը թույլ չի տալիս, որ կյանքն ինքն իրեն դրսևորի[8]:

Պետք է նշել, որ այս հասկացությունը ոչ միայն սահմանման և մեկնաբանության, այլև գնահատման լայն հայեցակետ ունի՝ բնության, մարդու և կեցության ճանաչողության մշակութաստեղծ միջոց լինելուց մինչև իռացիոնալ, անճանաչելի և հակամշակութային գոյաբանական

---

[5] **Евзлин М.** Космогония и ритуал. М., 1993, с. 38.

[6] Տե՛ս **Юнг К. Г., Хендерсон Джозеф Л., фон Франц Мария Луиза, Яффе Аниэла, Якобе Иоланда** Человек и его символы. М., 2006:

[7] Նույն տեղում:

[8] Տե՛ս **Тен Ю. П.** Символические основы межкультурной коммуникации. (Сб. ст.: Гуманитарные и социальные науки, № 6, с. 22-28), Р-н-Д., 2007:

երևույթ: Իսկ քանի որ այն չի կարող աշխարհի փիլիսոփայական ճանաչողության միջոց լինել, ուստի պետք չէ փիլիսոփայությանը:

«Սիմվոլ» հասկացությունը դժվար է սահմանել նախ և առաջ այն պատճառով, որ այն ներկայանում է գիտության ամենատարբեր ճյուղերում՝ մաթեմատիկայից մինչև դիցաբանություն: Եվ դա այնպիսի պարադոքսալ իրավիճակ է ստեղծում, որ «սիմվոլ» հասկացության տակ կարելի է հասկանալ և՛ լիարժեք չգիտակցված ինտուիցիա, և՛ վերացարկման ամենաբարձր մակարդակում գտնվող փիլիսոփայական «հասկացություն», և՛ սիմուլյակր, և՛ դրա հակադրությունը:

Փիլիսոփայության ավելի վաղ շրջանում սիմվոլը սահմանելու հիմնական դժվարությունը կապված էր այն ալեգորիա, նշան, միֆ հասկացություններից տարբերակելու հետ: Շատ դեպքերում այս հասկացությունները մեկը մյուսով փոխարինվում էին: Հետագայում նշանն իր խնդիրների ձևակերպումը սկսեց ստանալ սեմիոտիկայում, ալեգորիան՝ գեղարվեստական կոնկրետ ստեղծագործություններում, միֆը կառուցվածքային հետազոտությունների էր ենթարկվում, իսկ սիմվոլը, որպես այդպիսին, մինչ այսօր փիլիսոփայության մեջ ներկայանում է առանձին տեսությունների ձևով, որոնք այդպես էլ այս խնդրի տեսաբաններին միակարծության չեն հանգեցնում, թեև դրանցից յուրաքանչյուրն իր ողջամիտ բացատրությունն է տալիս այս երևույթին:

Հասկացության սահմանման մյուս դժվարությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այն անընդհատ փոխակերպումների մեջ է: Հասկացության բովանդակությունն անընդհատ ընդլայնվում է փիլիսոփայության, գիտության և արվեստի նոր օրինակներով, որոնք գործնականում ստիպում են հեղինակներին դուրս գալ սեփական հայեցակարգի շրջանակներից, անընդհատ լրամշակել սիմվոլի բովանդակությունը, ինչի հետևանքով սիմվոլիզմը՝ որպես երևույթ, զուտ մեթոդից առհասարակ վերածվում է աշխարհընկալման:

«Սիմվոլ» հասկացության մեկնաբանության վերոնշյալ դժվարությունները, ինչպես նաև դրա տարաբնույթ արժևորումները, սակայն, չեն նվազեցնում հասկացության կարևորությունը փիլիսոփայության մեջ:

«Սիմվոլ» (հունարեն՝ σύμβολον՝ symbolon) բառի հիմքում symballo բայն է: Հին հունական էպոսում, Հոմերոսի գրվածքներում (մ.թ.ա. 7-րդ դ.) այդ բայն օգտագործվել է աստվածների ու մարդկանց հանդիպում, երկու գետերի միախառնում և նմանատիպ այլ իմաստներով[9]: Ա. Աբդուլինը նշում է, որ «սիմվոլ» բառը օգտագործել է դեռևս Պինդարեսը (մ.թ.ա. 518-442 թթ.): Սիմվոլն առաջին անգամ փիլիսոփայական հասկացության կարգավիճակ է ձեռք բերել անտիկ շրջանի հունական փիլիսոփայության մեջ: Մինչսոկրատականներից առաջ սիմվոլը՝ որպես հասկացություն, շատ չի կիրառվել, բայց կապվել է աշխարհի ընդհանուր պատկերի ըմբռնման հետ (ունեցել է աշխարհայացքային նշանակություն):

---

[9] Տե՛ս **Абдулин А. Р.** Культура и символ. Уфа, 1997, էջ 25:

Հ. Գադամերի կարծիքով՝ սկզբնապես «սիմվոլ» բառն ընդհանրական, ազգակցական «կապերի» մասին է վկայել. «Այս բառով նշանակվում էին միտումնավոր կոտրված խեցու մասերը, որոնց համադրման միջոցով տարբեր սերունդներ հնարավորություն էին ստանում հետագայում ճանաչել մեկմեկու»[10],- նշում է նա: Ա. Ա. Տախո Գոդին նշում է, որ սիմվոլի մեկնաբանության այս գիծը սկիզբ է առնում Էմպեդոկլեսի փիլիսոփայությունից և ամրապնդվում է Արիստոտելի երկերում[11]: Ըստ նույն հեղինակի՝ թեև սիմվոլը բազմաբովանդակ է, այնուամենայնիվ այն մինչև այսօր հստակ և պարզորոշ պահպանել է իր այն բովանդակությունը, որը ցույց է տալիս երկու երևույթի համընկնումը, միաձուլումը, հանդիպումը որևէ երրորդ երևույթում (հուն.՝ Συμβαλλω), ինչպես նաև այդ «հանդիպման», միաձուլման հետևանքը (հուն.՝ σύμβολον), որը, սակայն, իր սեմանտիկական պարզության մեջ հեռու է բոլորին հասանելի պարզությունից և վերաբերում է միստիկականին և խորհրդավորին:

Ա. Աբդուլինն իր «Մշակույթ և սիմվոլ» մենագրության մեջ նշում է, որ խորհրդավորի հետ սիմվոլի կապի մասին գաղափարը զարգացնում էին պյութագորականները. նրանք նշում էին, որ սիմվոլը թույլ է տալիս հարաբերվել անտեսանելիի, հեռավորի և խորհրդավորի հետ: Էմպեդոկլեսը շեշտում էր, որ սիմվոլը մեխանիկորեն չի միավորում երկու տարբեր մասեր. այդպիսի միավորման ժամանակ նոր իմաստ է ծնվում: Իսկ Դեմոկրիտեսը բառը առարկայի սիմվոլն էր համարում՝ ընդգծելով, որ այդպիսի նշանակմամբ ամրագրվում են առարկայի ոչ պատահական, էութենական բնութագրիչները[12]:

Այսպիսով, Պյութագորասի, Էմպեդոկլեսի և Դեմոկրիտեսի փիլիսոփայությունների շնորհիվ անտիկ փիլիսոփայության մեջ ձևակերպվում է «սիմվոլ» հասկացության մեկնաբանության երեք հիմնական ուղղություն. սիմվոլը՝ որպես թաքնված, խորհրդավոր իմաստ արտահայտող երևույթ (Պյութագորաս), մի բան, որը վերառված ձևով առարկայի էութենական հատկանիշներն է արտահայտում (Դեմոկրիտես), մի նոր սկիզբ, որը ձևավորվում է ամբողջի՝ ոչ մեխանիկորեն իրար համակցված մասերից (Էմպեդոկլես):

Փիլիսոփայության պատմության դասական փուլում ձևավորվում է սիմվոլի մեկնաբանության երկու ավանդույթ, որոնք պայմանականորեն կարելի է անվանել սիմվոլի մեկնաբանության պլատոնյան գիծ և արիստոտելյան գիծ: Հեղինակներն այս հասկացությունն իրենց համակարգերում օգտագործում են տարբեր խնդիրներ լուծելու նպատակով. Պլատոնը՝ գլխավորապես գոյաբանական, Արիստոտելը՝ ճանաչողական-իմացաբանական: Այս երկու հիմնական մոտեցումները (տարբեր տեսություններում տարբեր ձևով) պահպանվել են մինչև այսօր:

---

[10] **Гадамер Г.** Актуальность прекрасного, М., 1991, с. 287.

[11] Տե՛ս **Тахо-Годи А. А.** Термин «символ» в древнегреческой литературе // Образ и слово. Вопросы классической филологии. Вып. 7. М., 1980, էջ 16-57:

[12] Տե՛ս **Абдулин А. Р.** նշվ. աշխ., էջ 157-158:

Պլատոնյան գծում սիմվոլը բարձրագույն, ոչ նշանային էության նշանային արտահայտությունն է, զգայական և գերզգայական աշխարհների միավորումը, որտեղ էպիստեման՝ գիտելիքը, և դոքսան՝ կարծիքը, գոյաբանորեն հարաբերակցվում են էյդոսների իրական կեցության և զգայականորեն հասանելի աշխարհի հետ: Արիստոտելյան գիծը սիմվոլը ճանաչողության գործիք է համարում, որի միջոցով արտահայտվում է առարկաների բովանդակությունը: Մտածողը սիմվոլ է անվանում այն հասկացությունը, որը միմյանց է կապում նշանակությունների իրար «չհանգող» շարքեր: Սիմվոլը այստեղ պայմանական (կոնվենցիոնալ) նշան է, որի նշանակությունը ճանաչելի և ամբողջովին արտահայտելի է[13]:

Ըստ Ա. Լոսևի՝ արիստոտելյան և պլատոնյան համակարգերի ձևավորման ժամանակաշրջանը «սիմվոլի» մեկնաբանության որակապես նոր փուլ կարելի է համարել, քանի որ դրանում «սիմվոլի մեկնաբանությունը վերաճում է դիալեկտիկայի այնպիսի հիմքի վրա, որտեղ դիալեկտիկան ենթադրում է բացարձակ մոնիզմ՝ հաստատելով գաղափարի և առարկայի նույնականությունը»[14]: Սակայն նույն հեղինակը, գնահատելով հունական փիլիսոփայության դասական շրջանը սիմվոլի զարգացման տեսանկյունից, նշում է. «Սիմվոլը հունական դասական գրականության մեջ ոչնչի չի ուղղորդում, իսկ եթե անգամ ուղղորդում է, ապա՝ ակնհայտի: Այն չի տարբերվում նշանից և անգամ նույնանում է էմբլեմայի հետ»[15], ուստի արդեն կայացած «սիմվոլ» հասկացության մասին խոսելը դեռևս վաղ է: Ավելին, հավելում է նա, «սիմվոլ» հասկացությունն անտիկ դասական փիլիսոփայության մեջ շատ կարևոր մի առանձնահատկություն ունի. այն ինքնաբավ է, չի կապվում այն առարկայի հետ, որի սիմվոլն է. «Դասական տեքստերում սիմվոլն ինչ-որ բան է և ոչ երբեք՝ ինչ-որ բանի սիմվոլ»[16]:

Ըստ նույն հեղինակի՝ մինչև Ք. ա. 3-րդ դարը հին հունական գրականությունն ընդհանրապես «սիմվոլ» հասկացության կարիքը չի ունեցել, և գործնականում այն չի տարբերվել նշանից կամ էմբլեմայից:

Այսպիսով, Պլատոնը, Արիստոտելը սիմվոլն իրականության ճանաչողության միջոց էին համարում, մի միջոց, որը հնարավորություն էր տալիս բացահայտելու առաջնահիմքի էությունը: Ավելի ուշ ստոիկների և նորպլատոնականների փիլիսոփայական ուսմունքների շնորհիվ ձևավորվում է սիմվոլի՝ որպես երևույթի և էության օրգանական միասնության գաղափարը, իսկ Պրոկլեսը ձևակերպում է սիմվոլի դիալեկտիկան: Վերջինիս կարծիքով՝ բնությունը, որ աստվածային արարիչն է, ստեղծում է նաև սիմվոլների աշխարհը, ուստի փիլիսոփա-

---

[13] Տե՛ս **Лосев А.** История античной эстетики: Итоги тысячелетнего развития, М. 1994, էջ 471-472:

[14] **Лосев А.** Очерки античного символизма и мифологии. М., 1993, с. 621.

[15] **Лосев А.** История античной эстетики: Итоги тысячелетнего развития, с. 472.

[16] Նույն տեղում, էջ 55-56:

յության խնդիրը բնության խորհրդավոր օրենքների այդ արտաքին դրսևորումների բացահայտումն է, ինչը հնարավոր է միայն սիմվոլային մտածողության դեպքում: Ըստ Պլոտինի՝ զգայական աշխարհը էյդոսների (գաղափարների) արտացոլումն է, իսկ էյդոսները հավերժական են և անշարժ: Նյութական աշխարհն անընդհատ փոփոխվում է և հոսում, իսկ էյդոսը ներթափանցում է առարկայի մեջ, դառնում կենդանի էակ, վերածվում այդ առարկայի հավերժական էության: Ցանկացած սիմվոլ ենթադրում է էյդոս:

Գնահատելով սիմվոլի փիլիսոփայական զարգացման նորպլատոնական փուլը՝ Ա. Լոսևը գրում է. «Նորպլատոնականների փիլիսոփայական ձգտումներին օտար էին սիմվոլի նշանային բնույթը, նրա պարզությունն ու հասանելիությունը: Նրանց փիլիսոփայության հիմքում ոչ թե սիմվոլն է, այլ ճշմարտության սիմվոլային մտահասանելիությունը, երբ սիմվոլը իմացաբանական տեսանկյունից դառնում է ճանաչողության միջոց, իսկ գոյաբանական տեսանկյունից՝ ամբողջ գոյավորի սուբստանցիոնալ հիմքը»[17]:

Կողմնորոշվել սիմվոլի վերաբերյալ գիտելիքների մեջ, որոնք կուտակվել են հասկացության պատմական զարգացման ընթացքում, առաջին հայացքից անհնար է թվում: Հասկացության վերաբերյալ քիչ թե շատ ընդհանրական ընկալում կարող է ապահովել նրա նկատմամբ ժամանակային և կառուցվածքային (տարածական) մոտեցումների համադրումը, որոնց հիմքում համապատասխան ուսումնասիրության մեթոդներն են: Այս մեթոդների համադրումը հնարավորություն է տալիս հաշվի առնելու սիմվոլի և՛ տարածական (կառուցվածքային տեսանկյուն), և՛ սոցիալ-մշակութային՝ պատմական (ժամանակային տեսանկյուն) առանձնահատկությունները, որոնք՝ որպես համաժամանակայինի (սինխրոնի) և տարաժամանակայինի (դիախրոնի) համադրում առաջին անգամ իրականացվել են լեզվաբանության մեջ: Սիմվոլի տարածական առանձնահատկությունները հնարավորություն են տալիս հստակեցնելու սիմվոլի բովանդակությունը ձևական-սեմիոտիկական տեսանկյունից: Իսկ քանի որ սիմվոլը նախ և առաջ նշան է, ուստի խնդրի ուսումնասիրության այս տեսանկյունը ենթադրում է սիմվոլը հարաբերել նշանին՝ դրանց միջև առկա նմանությունների և տարբերությունների հստակեցման նպատակով: Սիմվոլի ժամանակային վերլուծությունը հնարավորություն է տալիս հստակեցնելու սիմվոլի առանձնահատկությունները պատմական-մշակութային համատեքստում:

Այսպիսով, անտիկ փիլիսոփայության մեջ (մինչ այսօր ևս) սիմվոլի մեկնաբանության գրեթե բոլոր ձևերում շեշտադրվում է սիմվոլի երկակի բնույթը՝ նյութական սուբստրատի միջոցով իդեականի արտահայտման կարողությունը: Սիմվոլի մեկնաբանության այս ձևը սիմվոլը մի կողմից մոտեցնում է նշանին, մյուս կողմից՝ պատկերին: Ընդ որում՝

[17] **Лосев А.** История античной эстетики. Поздний Эллинизм. том VI, М., 1980, с. 207-208.

սիմվոլը օժտված է և՛ նշանի, և՛ պատկերի հատկանիշներով (դա է պատճառը, որ շատ հաճախ ոչ թե սիմվոլն է դիտվում իբրև նշանի տեսակ, այլ նշանը և պատկերը՝ սիմվոլի): Երբ սիմվոլն ուղղված է որևէ գաղափար պատկերավոր ներկայացնելուն, ապա գլխավորապես շեշտադրվում է այն, թե որքան համարժեք է բովանդակությունն արտահայտվում, և ինչպիսին են փոխարինման մեխանիզմները: Մյուս դեպքում սիմվոլի տարբերակիչ հատկանիշ է սիմվոլի մեջ միստիկական, մետաֆիզիկական կողմի առկայությունը:

Ի տարբերություն նշանի՝ սիմվոլն ավելի բարդ կառուցվածք ունի և վերացարկման ավելի բարձր մակարդակում է: Երբ ասում ենք «Ա-ն Բ-ի նշանն է», ապա բավարար է անդրադառնալ Ա-ին՝ Բ-ի մասին պատկերացում կազմելու համար: «Ա-ն Բ-ի սիմվոլն է» դատողության համար Ա-ն Բ-ի մասին մեր ընդհանրական պատկերացումների արդյունքն է: Այս դեպքում սիմվոլը առարկայի մասին գիտելիքների մոդելն է:

Բանալի բառեր – *սիմվոլ, մշակույթ, պատկեր, էյդոս, մոդել, միստիկա, նշան*

ЛИЛИТ АЛЕКСАНЯН – ***Трудности определения символа и его понимание в античной философии.*** **–** В символе традиционно акцентируется его дуалистический характер: посредством какого-либо материального субстрата символ обозначает некоторую идею. В таком понимании он близок к знаку и образу. Но образ слишком обобщён и, как правило, иллюстрируется художественной практикой. В знаке же обычно выделяют его первичную, «указательную» характеристику. Когда символ трактуется как образное представление некоторой идеи, то основной акцент делается на том, насколько адекватен перевод плана содержания в план выражения и каковы механизмы этого перевода. Символ также трактуется как смысл, не имеющий однозначного прочтения; его постижение обусловлено интуицией. Символ имеет более сложную структуру, чем знак. Символ – результат более сложной абстракции.

Когда говорят, что А есть знак некоего Б, имеется в виду, что А указывает на Б, т. е. достаточно обратиться к А, чтобы получить представление о Б. Когда же говорят, что А есть символ Б, то здесь имеется в виду, что А является результатом наших представлений о Б, сконцентрированных в А.

Ключевые слова: *символ, культура, образ, эйдос, модель, мистика, знак*

LILIT ALEKSANYAN – ***Symbol Determination Difficulties and the Interpretation of Symbol in Ancient Philosophy.*** – The symbol has a dual nature: it represents some idea by a material substrate. And traditionally philosophers have emphasized that feature of the symbol. In this sense, the symbol stands as the closest concept with the sign and image. But the image is too generalized. For the sign, the most important thing is its feature of pointing out. The symbol has a difficult and complex structure than the sign, and the symbol is the result of a more complex abstraction.

When we say A is the sign of B, it means that A points out B, and when we say that A is the symbol B", here it is already necessary to bear in mind that A is the result of our understanding of B concentrated in A.

Key Words: *symbol, culture, image, eidos, model, mystics, sign*